ՀՏԴ 37.01 *Մանկավարժություն*

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ա. Թովմասյան

Սովորողների հայեցի դաստիարակության՝ ձևավորումը բոլոր սերունդների և նախորդ պատմական ժամանակաշրջանների համար կենսական նշանակություն է ունեցել, որտեղ նյութական, հոգևոր, գեղագիտական, բարոյական պահանջմունքները գտնվել են որոշակի հարաբերակցության մեջ, և ներդաշնակ զարգացած անհատի լիարժեքությանը նպաստել է ազգային մշակույթը: Գրեթե բոլոր դարաշրջաններում և բոլոր ժողովուրդների մշակութային ստեղծագործությունները նպաստել են ազգապահպանման գործընթացին: Մեսրոպ Մաշտոցը և Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը և Անանիա Շիրակացին, Խաչատուր Աբովյանը և Հովհ.Թումանյանը, Եղիշե Չարենցն ու Մ.Սարյանն իրենց աշխատություններով ծառայել են ազգին, ժողովրդին, որովհետև նրանց ստեղծագործությունները դարձել են ազգապահպանման մշակույթ, որոնք այսօր էլ կատարում են իրենց հայապահպան առաքելությունը:Այդ առաքելությանն անդրադարձել են բոլոր դարերի առաջադեմ ներկայացուցիչները՝ մշակութաբանները, մանկավարժները, բարոյագետները, գեղագետները և այլ բնագավառների նշանավոր գործիչներ: Պատահական չէ, որ վերջին տասնամյակների ընթացքում փիլիսոփաների, սոցիոլոգների, հոգեբանների գիտաժողովներում սովորողների հայեցի դաստիարակության հարցը դարձել է լուրջ քննարկման առարկա:

Այն եղել և մնում է արդի հասունացող սերնդի դաստիարակության հիմնական նպատակը:

Ամեն ազգի խնդիրն է՝ ապահովել իր սերնդի կրթությունը և դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումների և, հատկապես, բարբառախոս միջավայրի պայմաններից ելնելով:[1]

Խորհրդային շրջանում աշակերտների հոգևոր զարգացման մասին խոսել են շատերը, խոսել են խորը և բովանդակալից: Սակայն այդ շրջանի ինտերնացիոնալիստական գաղափարախոսությունը թույլ չէր տալիս, որպեսզի ազգային կողմնորոշումը ուղղվեր դեպի յուրաքանչյուրի ազգային արմատները:

Սովորողների հայեցի դաստիարակությունը ժամանակակից հումանիստական դաստիարակության գլխավոր նպատակն է: Չնայած այդ հարցի վերաբերյալ ծավալուն գրականության առկայությանը՝ այսօր մենք չունենք վերափոխվող դպրոցի և սովորողների հայեցի դաստիարակության միասնական հայեցակարգ, չեն մշակվել ճանաչում գտած ընդհանրական

[1] *Ա.Վ.Թովմասյան, Հայեցի դաստիարակության հիմունքները, Ստեփանակերտ 2006, էջ 9:*

հատկանիշները:Մինչդեռ առանց նման մոտեցումների հնարավոր չէ տեսականորեն և գործնականում լուծել հայապահպանության և հայեցի դաստիարակության հիմնախնդիրը:

Այս հարցը քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հետևյալ հանգամանքին: Միշտ էլ շրջանառության մեջ է գտնվել այն գաղափարը, համաձայն որի լավ հիմքերի վրա դրված կրթությունը, որը նպաստում է ժողովրդի մակարդակի բարձրացմանը, համապատասխանում է ժամանակի պահանջներին, արդեն ազգային է: Լիարժեք կրթության շնորհիվ է հնարավոր հասնել այն բանին, որ ազգն ունենա ընդհանուր կամք՝ տիրանալու իր նախնիների կերտած հայրենիքին, տեր կանգնել ու իր անցյալի հաջողություններին ու անհաջողություններին, հաղթանակներին ու պարտություններին, իր երջանիկ և դժբախտ օրերին, ձգտելով ունենալ ընդհանուր կամք ապագայի նկատմամբ, կերտելու նոր ապագա:[1]

Ս.Մանդինյանը գրում է. «Իր մշակույթում կյանքին պատրաստող ազգային կրթությունը հնարավոր է միայն՝ ապահովելով միացումը համամարդկային արժեքների յուրացման հետ:Հատկապես համաշխարհային մշակույթի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած հարաբերակցությունն է ազգին ազգ դարձնում և ոչ թե ինքն իրենով պարփակվելը»:[2]

«Քանի որ դաստիարակության ազգային իդեալը ազգի գոյության պահպանումն է, զարգացումն ու երջանկությունը, ուստի և ազգային դաստիարակությունը կոչված է հեշտացնելու ազգի գոյության պայքարը, կյանքի պայմաններին նրա հարմարեցման գործընթացը: Ահա թե ինչու ազգային դաստիարակությունը պետք է երեխայի մեջ ստեղծի այն գիտակցությունը, որ նրա անհատական երջանկությունը գտնվում է ազգի հավաքական երջանկության մեջ, բոլոր դժբախտությունները բխում են ազգային ընդհանուր ձախորդություններից և դժբախտություններից: Ուստի և դաստիարակության դերն է՝ երջանկացնել անհատին ազգային երջանկության միջոցով»:[3]

Նույն գաղափարն է պաշտպանվում Ա. Բահաթրյանի հետևյալ դիպուկ արտահայտությամբ. «Գիտելիքներից զատ դպրոցը պիտի դաստիարակե և սաներին պատրաստե կյանք մտնելու և ծառայելու իր ժողովրդին, հասարակությանը»:[4]

Գիտափորձի ժամանակ հիմք ենք ընդունել մեթոդաբանական ընդհանուր և հատուկ սկզբունքներ և հիմնադրույթներ: Ընդհանուր բնույթի հիմնադրույթներից կարևորել ենք մատերիալիստական և դիալեկտիկական սկզբունքները, հատուկ բնույթի հիմնադրույթներից՝ մանկավարժության, հոգեբանության և այլ գիտությունների մասնավոր սկզբունքները: Աշխատանքները տարվել են՝ հիմք ընդունելով երևույթների ուսումնասիրման

---

[1] *Մինասյան Բ.,Մանկավարժական հիմունքներ,Թավրիզ, էջ 120:*

[2] *Մանդինյան Ս., Համառոտ մանկավարժություն, Թիֆլիս, 1878, էջ 61:*

[3] *Կարապետյան Հր.,Ազգի և ազգայինի դաստիարակության հիմնախնդիրները, Երևան, 1999, էջ 57:*

[4] *Բահաթրյան Ա.,Հայ մանկավարժներ/Ա.Շավարշյանի խմբագրությամբ/, գիրք բ, Երևան, 1993, էջ 123:*

համակարգայնությունը, ինչպես նաև բացատրական- ցուցադրական, որոնողական, պրոբլեմային ուսուցման տեսակները:

Գիտափորձերի ողջ ընթացքում ուսումնասիրել ենք սովորողների զարգացածության աստիճանը, հետաքրքրությունների շրջանակները, վերաբերմունքը դպրոցի նկատմամբ: Պարզվել է, որ կան՝

- սովորել չցանկացողներ -10 %,
- սովորել ցանկացողներ, բայց «անընդունակներ» - 20%,
- սովորել ցանկացողներ և ընդունակներ – 70 %:

Հաջողության հասնելու նպատակով առաջնորդվել ենք դիդակտիկայի՝ գննականության, մատչելիության, հաջորդականության, սիստեմատիկությունյան սկզբունքներով՝ պահպանելով ներառարկայական և միջառարկայական կապերը, հիմք ընդունելով դասի ճանաչողական հետաքրքրությունները, որոնք նպաստել են սովորողների ակտիվությանն ու դրական դրդապատճառների ապահովմանը: Կարևորել ենք կրթության բովանդակությունը, ինչը հնարավորություն է տվել այսօրվա դպրոցականին հաղորդակից դարձնել ազգային արժեքներին, նրա մեջ սերմանել ազգային ինքնատիպություն, որը ժառանգված է նախնիներից:

Հատկապես սովորել չցանկացողներին գրավում է արհեստներին տիրապետելը, ոմանց առևտրական գործերը և բիզնեսի մեջ ներգրավվելը՝ հիմք ընդունելով նյութական օգուտը և բարիքները:

Գիտահետազոտական աշխատանքները, կապված սովորողների հայեցի դաստիարակության լավացման ուղիների հետ, հնարավորություն ընձեռեց գիտափորձն անցկացնել մանկավարժության, հոգեբանության, հայ ժողովրդի պատմության և արվեստի զուգակցմամբ, որովհետև ոչ հոգեբանական և ոչ մանկավարժական գիտությունները չեն ծառայի իրենց նպատակին, երբ դրանք չհամադրենք տվյալ ժողովրդի պատմության, մշակույթի, դաստիարակության և կրթության հետ:

Այս իմաստով ուշագրավ են Պ. Սևակի նկատառումները: Նա, ազգային արժանապատվությունը համարելով ազգի ամենակարևոր հատկանիշներից մեկը, այն ներկայացնում է որպես ազգի քաղաքակրթության մասին շատ բան ասող չափորոշիչ, որը չի սահմանափակվում ազգային շրջանակներում և իր բովանդակությամբ համամարդկային է:

- Ես բաց ճակատով և լեցուն հպարտությամբ պիտի վկայեմ, որ ես հայ եմ՝ զավակը մի ժողովրդի, որ իրոք շատ բան է տվել աշխարհի քաղաքակրթությունը և տվածի մեջ էլ ինձ համար ամենաթանկն ու ամենագեղեցիկը՝ իր այլասիրական այն ոգին է, որ եվրոպացիք ալտուրիզմ են կոչում, իսկ մեր երկրում գերադասելի է կոչել «ինտերնացիոնալիզմ»:[1]

Մենք հաշվի ենք առել հան սոցիալական մանկավարժության մի շարք հարցեր: Արցախը դարեր շարունակ զրկված է եղել հայեցի դաստիարակության հիմնական աղբյուրից՝ մայր Հայաստանից: Արցախի հայը մշտապես զգացել է Ադրբեջանի կողմից պետական մակարդակով տարվող հայահալած քաղաքականության դառը պտուղները: Հայ դպրոցականը զրկված էր նույնիսկ հայոց պատմություն ուսումնասիրելու իրավունքից, հեռու էր հայ արվեստից ու գրականությունից, մեռցնում էին

[1] *Թովմասյան Ա.Վ., Հայեցի դաստիարակության հիմունքները, 2006, էջ 298:*

ամեն մի ազգային և առաջադիմական միտք, որին նպաստում էին նաև հայ «ինտերնացիոնալիստները», ուստի, այսօր մեր խնդիրն է նաև «բուժել» անցյալից ժառանգած հոգեկան խեղումները:

Թեև Արցախյան պատերազմը հայ ոգու զարթոնքի արտահայտությունն է, այնուհանդերձ, պատերազմն իր հետ բերեց նաև մանկավարժական բնույթի լուրջ հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջում է մանկավարժահոգեբանական նոր մոտեցումներ, նոր և արդյունավետ մեթոդներ, ուր հաշվի առնված լինեն և պատերազմի «սինդրոմը», և բարբառախոս միջավայրի պայմանների առանձնահատկությունները:

Սովորողների կրթադաստիարակչական զարգացման խնդիրների և ուսումնասիրությունների ժամանակ նկատել ենք, որ անցումը մանկությունից հասունություն հաճախ դրամատիկական է, որտեղ հիմնականում նկատվում է սոցիալական զարգացման ուղղվածության ազդեցությունը: Պարզվեց, որ այդ բարդ շրջանում անհատի հետաքրքրությունները, ճգտումները, ինչպես նաև վարքը չեն հասկացվում:

Հետագա հետազոտական աշխատանքներում փորձարարական և ստուգողական դասարաններում արծարծել ենք սովորողների զարգացման ուղղությունները, գործունեության տեսակները և ժամանակակից անձնավորության բնութագիրը:

Գիտափորձերի ժամանակ հայրենիքի մասին աշակերտների իմացությունը ստուգելու նպատակով կազմակերպել ենք այնպիսի բանավեճեր, որտեղ բացահայտվել են աշակերտների մտածողության ուղղվածությունը: Օրինակ՝ «Քո հպարտությունը» բանավեճի կազմակերպման ժամանակ նախօրոք աշակերտներին առաջադրվել են հետևյալ հարցերը՝ «Հպարտանու՞մ ես քո հզոր հայրենիքով», «Մարդասիրական ի՞նչ օրինակներ գիտես, որոնք քո մեջ հպարտության զգացում են առաջացնում», «Արդյոք, խորհե՞լ ես ընդհանուր բարօրությանը ծառայելու, դրանով քեզ հպարտ զգալու մասին», «Ի՞նչ ապրումներ ես ունենում, երբ տիեզերագնացները կատարում են հերթական թռիչքը», «Ինքդ քեզնով հպարտանու՞մ ես, եթե այո, ապա արածդ ո՞ր գործերի և բնավորությանդ ո՞ր գծերի համար», «Արվեստի ի՞նչ ստեղծագործություններ են հոգիդ լցնում հպարտությամբ», «Մարդկային պատմության, մարդկային մտքի ո՞ր ստեղծագործությունները հպարտությամբ կներկայացնեիր այն մարդկանց, ովքեր եկած լինեին այլ մոլորակներից»:

Հայտնի պատճառներով՝ աղետները, պատերազմը, սոցիալական և տնտեսական ճգնաժամերը նկատի ունենալով, թվում էր, թե վերջին շրջանում Հայաստանի և Արցախի դպրոցներում թուլացել են աշակերտների դաստիարակչական աշխատանքների կշիռը, աշակերտների ակտիվ կենսադիրքորոշման և աշխարհայացքի ձևավորման, ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպման, անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման գործընթացները: Բայց դա տևեց միայն մի պահ, որից հետո դպրոցը մտավ իրեն վերապահված արժանապատիվ հունի մեջ՝ արժանի հայ ժողովրդի տոկունությանը, որպես մշակույթ ունեցող և պաշտող ազգ: Բոլոր գիտափորձերն ապացուցեցին, որ ներկա սերունդը անդավաճան կերպով սիրում է իր հողը, լեզուն, հայրենիքը, ժողովրդին:

Այստեղ պետք է նկատի ունենալ, որ Արցախի ընտանիքներում մեծացող սերունդը ուղղակի թե անուղղակի հաղորդակից է եղել հայրենասիրական ոգու պոռթկումներին, որոնցից նա չէր կարող չազդվել, և նրանց պատասխաններն էլ որոշ չափով պայմանավորված են այդ գործոնով:

Некоторое вопросы повышение эффективности эксперимента
армянского воспитания
А.Товмасян

Резюме

В деле воспитания армянина, безусловно, роль национальной школы является определяющей. В связи с этим, учитывая условия диалектной среды путем применения научных исследований, конкретных методов и способов были выявлены общие направления, которые привели к выяснению истины. Применяемые методы были исследованы как способы выявления закономерностей исследуемого обЪекта, и как линия творческих изысканий определения истины, которая основывается на анализе результатов экспериментаторских и тестируемых классов, за которым последнее слово. Каждый метод имеет свои познавательные возможности и пределы и его правильное использование послужило сильным толчком в процессе национального воспитания учащихся.

Some guestions about the improvement of the experiment
effectiveness of armenian education
A.Tovmasyan

Summary

The role of national school in the cause of Armenian national consciousness education cannot be underestimated. We have defined some general guidelines taking into account the conditions of dialectal environment. A number of studies, methods and ways have been undertaken to establish the truth. The methods applied have been studied both as ways to reveal the regularities of the object under study, and as a range of creative searches for truth, which can be established based on the analysis of experimental and trial classes. Each method has its cognitive resources and scope, and their proper application has been a strong impetus in fostering the national consciousness.